



65 (249). ԹՈՂՈՒԹԵՆ

Քուրդ մե տիկ մե եղ կը գնե, քանիմ՝ օր կը բանցուն, կը տեսնան, օր մըջ շան ակին է լցուկ, սիրտ ուրանց կը բղղորի:  
Կնիկ կըսե.

— Մա՛րդ, գնա մըտ մուռն, տես ի՛նչ կըսե:

Մարդ կէրթա, նիաթալեր չետ կը դառնա:

— Ի՛նչ ըսեց,— կը հարցու կնիկ:

— Իմալ մուռն կըսե՝ մեր եղ հարմեր է:

— Մա՛րդ,— կըսե կնիկ,— մեկ-էրկու խիդր է, քիչ բան չէ, խո թափելու չի՛նք, գնա կես խոստ արի՝ բալքի հարմ՝ էնե:

Մարդ կէրթա ղկես կը խոստանա մուռն: Մուռն կը մտածե, կը մտածե, կըսե.

— Շան տիկն օր բացիք՝ բերնե՞ն հանիք, թե՞ յետեուց:

— Բերնեն,— կըսե քուրդ:

— Օր բերնի դիուց է, ֆեթւլան կըսե՝ հալա՛լ է, գնա կես ըի՛նս կուտիմ, մեկել կեսն էլ դուք կերեք:

